



ԱՄՍԱՐԵՐԹ
AVEDARANI TSAIN

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. SARIAN

Արամատէր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

Խմբագիրներ՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ և Կ. ԹՈՒՄԱՆԱՆ

Ոչ - յարանուանական և անկախ կրօնական պարբերաբք

Ա. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1939

ԹԻԻ 7



Իմ Հոգիես ամեն մարմնի վրայ պիտի բափեմ: (Գործք. Բ. 17)

Մեռեալին եւ ի կ'աղօթէի ծնկաչոյ,
Երբ կ'աղօթէի զգացի եւ ի մի Ոք,
Ահա՛, անիկա Յիսուսն էր, կը կայնէր
Ժպտելով նա, «Մի վախճար» ինծի կ'ըսէր:

«Տէ՛ր, քաի, Դու մահուան վրայ յաղթեցիր,
Հոգի տուր այս մեռեալին, մեքը կեանք դիր,
Որ պահ մ'առաջ մեռաւ, այժմ անկեցեղան»:
Ժպտելով քաւ, «Սակայն մեռած չե ան»:

«Ուստի կը ննջե, մահն եւ մեզ համար,
Արդ, կարող ես բառնալ իր խուփերն աչաց,
Զորոնք քու նշը այնքան ամուր է փակած»:
Ժպտելով քաւ, «Բայց ան չի բնանար»:

«Ո՛հ, քե անիկա արթուն է, իր աչքերն
Կը դիտեն լուսաւոյ երկնային դիմերն.
Վերադարձուր զայն իմ հեք սրտիս ցաւած»:
Ժպտելով քաւ, «Բայց ան տեղ չե գացած»:

«Աւա՛ղ, իմ կորուստս գիտեմ, ան մեծ է,
Ոհ, զուրկ եմ զինք շօշափելու հանոյք,
Մինչեւ անցնիմ Յորդանանու մութ գետէ»:
Ժպտելով քաւ, «Այդ խօսքդ իրաւ չէ»:

«Բայց իմ սիրելիս շատ հեռու կը քրւի,
Երբ իր ներկայութեան կարօտ կը բաշտեմ,
Թեպէս վստահ քե Քեզ հետ կը գտնուի»:
Ժպտելով քաւ, «Բայց անա ես հոս եմ»:

«Ոհ, Տէ՛ր, ի՞նչպէս գիտեմ քե ան կը բալէ»
Դեռ անտեսանելի, քեզ հետ եւ ինձ հետ,
Ո՛չ կը նիւհէ եւ ոչ հեռու է ինձմէ»:
Ժպտելով քաւ «Իմ մեքս բնակէ»:

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ

Պատ. Խմբագրութիւն «Աւետ. Զայն»ի

Սոյն երկտողովս կը փութամ յայտնել իմ մեծ ուրախութիւնս «Աւետարանի Զայնին»-հրատարակութեան առթիւ որու կ'սպասէինք երկար տարեկէ յետոյ: Կը հաւատամ որ ինձի հետ պիտի ուրախակցին բոլոր անկեղծ հոգիներ, այսպիսի օգտակար թերթի մը լոյս տեսնելուն համար: Թերթի մը պէտքը շատոնց կ'զգացուէր եզրապատի մէջ:

Մամուլին թիրթր մեծ է եւ անկէ կ'օգտուին աշխարհի մարդիկը, քաղաքական, տնտեսական եւ կրթական մարզերու մէջ: Աւետարանի պատգամներուն ալ լայն տարածումը եւ շատ տարածումը կարելի է միայն մամուլի միջոցաւ: Աստուծոյ զաւակներուն աւագ պարտականութիւնն է քաջալերել այսպիսի ձեռնարկները եւ ձեռնարկողները իրենց աղօթքներովը եւ նիւթական աջակցութիւններովը: Եւ գիտատեսիլ ձեռքներովը եւ կը մտադրեմ ՏԼՐՈՑԻԷ կարողութիւնն եւ իմաստութիւնն: Համեցէք ընդունիլ եւ ինձ
Ազիք. Մ. ՄԵԼԻՔՆԵԱՆ



ԱՄՍԱՐՔԵՐԹ
AVEDARANI TSAIN

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. SARIAN

Արամեանէր' Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

Խմբագիրներ' Խ. Թ. ՍԱՐԵԱՆ և Կ. Թ. ՌԻՄՍԵԱՆ

Ոչ - յարանուանական և անկախ կրօնական պարբերաբերք

Ա. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1939

ԹԻԻ 7

Այժմ կարելի՞ է արթնութիւն մը

Մեր նախորդ յօդուածով աշխատեցանք ցոյց տալ թէ՛ այժմ անհրաժեշտ պէտք մըն է մեծ և ընդհանուր արթնութիւն մը թէ՛ անհատական և թէ՛ հաւաքական կեանքերու մէջ: Անոր համար տուինք պատճառներ որոշ տուեալներու վրայ հիմնուած, որոնցմէ մէկն է՝ քրիստոնեաներու և քրիստոնեայ եկեղեցիներու այժմու տխուր և ողբալի վիճակը, որոնք զուրկ են կենսունակութենէ, շարժումէ: «Անուն ունիս թէ կենդանի ես, ու մեռած ես» խօսքը կը յարմարի ամէն տեղի համար:

Ոոստացած էինք երկրորդ յօդուածով մը ըսել՝ թէ արդեօք կարելի է այժմ ալ հզօր արթնութիւն մը, ինչպէս տեղի կ'ունենար անցեալի մէջ: Այս հարցումը ըրինք որովհետեւ տարածուն և համայնապարփակ հոգեւոր զարթնումի մը կարելիութեան վրայ սկեպտիկօրէն նայողներ կան Աստուծոյ զաւակ կոչուածներուն մէջ: Անոնց այս թերահաստութեան պատճառներ կան անշուշտ, անոնցմէ մեծագոյնը սա՛ է՝ թէ որքան ատեն որ քրիստոնեաներ իրարու միջեւ անհամաձայն են և ի-

րարու դէմ լարուած, ու փոքր տարբերութիւններու պատճառաւ անհաշտ թշնամիներու նման խումբերու բաժնուած են: Իրարու վրայ բարձրէն կը նային: Պատասխանատու գործիչներ փառասիրութենէ վարակուած ըլլալով հատուածամոլ դարձած են, իրենները կը ճանչնան որպէս ընտանիք մը, իսկ նայելով դուրսիններուն խորթ աչքով: Որքան ատեն որ իրերը այս վիճակի մէջ են, կարելի՞ է վերէն Պէնտէկոստեան այցելութիւն մը ակնկալել կ'ըսեն անոնք:

Այսպէս խորհողներ կը մոռնան թէ վերելք յիշուած իրերու իսուր վիճակը ինքնին պահառ մըն է՝ ակնկալելու Տերոջը Հոգիին յորդանոս հեղումը, ՈՐՊԷՍՁԻ ԱՆ ԳԱՅ ԵՒ ԴԱՐՄԱՆԷ ԱՅՍ ՑԱԻԱԼԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ:

Արդարեւ տեսնուած է որ անցեալի մէջ միշտ մեծ արթնութիւններ տեղի ունեցած են երբ աշխարհի մէջ անօրէնութիւն և ապականութիւն շատցած է և հաւատացեալ կոչուածներուն մէջ ալ շեշտուած անկում կայ: ԺՅ. դարուն մէջ, Լուիդիկոս ԺԴ-ին օրովը, Բարիզի մէջ տեսնուած պղծու-

թիւն ո՛չ մէկ տտեն տեսնուած է, ստակայն այդ ժամանակն էր նսեւ երբ Տէրը այցեւեց ապականած քաղաքը, արթնութիւն մը տեղի ունեցաւ Մատամ Կիւյօնի, Եպիսկոպոս Ֆենեւոնի և ուրիշներուն միջոցաւ:

Ճորտութեան և անաւակութեան մէջ լողացող անբարոյ Ֆլորէնս քաղաքին մէջ՝ Իտալիա, տեղի ունեցաւ նմանը քիչ անգամ պատահած հզօր արթնութիւն մը, այն աստիճան որ փողոցի ստահակները անգամ սկսան դադրեցնել իրենց պիղծ երգերը և հոգեւոր երգեր երգել փողոցներու մէջ: Տէրը հոգեւոր մեծ յեղաշրջում մը կատարեց այնտեղ Սալօնարոլայի միջոցաւ:

Ժէ. դարուն, Անգլիա, քրիստոնեաներու կեանքին մէջ այնպիսի մեծ ինկածութիւն մը կար որ, բանաստեղծ Կովպըր իր ոտանաւորներէն մէկուն մէջ կ'ըսէ, «Բանի մը հոգի Հեղիի օրհնեալ հոգիով, Ոփնի և Փնէհէս կը բացատրէ մնացածները» Ահա այդ ատենները Տէրը ղրկեց մեծ արթնութիւն մը Ուէյլէյի և Տիկ.Հընթեկտը նի միջոցաւ Անգլիա, իսկ Թէնընտ եղբայրներու և Դաւիթ Պրէյնըրտի միջոցաւ Ամերիկա, այն աստիճան որ թէ՛ Եւրոպայի և թէ՛ Ամերիկայի մէջ զգացուեցաւ Աստուծոյ զօրութիւնը:

1831ին Հոգին իջաւ Նիւ Եորք ապականած քաղաքը, իջաւ հոն բոլոր քարոզիչներուն, ժողովուրդներուն, թատրոններուն, վաճառականական հաստատութիւններուն վրայ: Նիւ Եորքի թատրոններէն մէկը կեդրոնավայրը դարձաւ հրաշալի արթնութեան մը: Այս ատենները, Հոգիով լեցուած մարդ մը՝ Արթըր Թէփմէն, կը դիմէ Նիւ Եորքի Կիթհամ թատրոնին տնօրէնին, ճիշդ այն պահուն երբ դերասան և դերասանուհիներ ուստուան իրենց փորձը ուսարտած էին: Ուղղակի

կ'ելլէ ամպիոն և «Այս գիշեր այս ամպիոնէն Տէրովը խօսքը պիտի քարոզուի» կը յայտարարէ և կ'սկսի երգել, ներկայ եղողներ կը մասնակցին իրեն: Թատրոնին սրահը և անոր կից գինետունը աղօթատեղիի կը փոխուին, և առաջին ժողովին 800 հոգիներ կը փրկուին: Յաջորդաբար այդ թատրոնին մէջ տեղի կ'ունենայ ժողովներու շարք մը 70 գիշեր, և փրկութեան և շնորհի այնպիսի տեսարաններ կը պարզուին, որոնք պիտի կազմեն Երկինքի Նիւթը, որքան ատեն որ Երկինքը մնայ:

Դարձեալ 1857ին Ամերիկա, երբ ժամանակները շատ գէշ էին այն աստիճան՝ որ հարիւր հազարաւոր հոգիներ ահաւոր անտեսական տագնապին յետին չքաւորութեան մատնուեցան: Բարեկեցիկ ընտանիքներ, որոնք չէին գիտեր ինչ է չունենալ, անօթի մնացին: Բարքեր այնքան ապականեցան որ ընտանեկան կեանքը շատերուն քով ողբերգութեան փոխուած էր: Շատեր ինքնասպան կ'ըլլային: Գողութիւն, ոճիր հասարակ տեղիք բաներ էին: Ամերիկեան ողբը յետին թշուառութեան մէջ՝ ինկաւ Աստուծոյ առջեւ և աղաղակեց Տէրով, Նինուէյի պէս, և հայցեց վերէն թողութիւն և ողորմութիւն: Տէրը ողորմեցաւ, վերէն եկաւ զօրութիւնը և ինկաւ հոգեւոր պաշտօնեաներու և աշխարհականներու վրայ միանգամայն՝ թատրոններ, հօթելներ, մթերանոցներ, գործարաններ, խանութներ, թանգարաններ բոց էին աղօթամողովներու, քարոզամոլովներու համար, և մարդիկ փողոցներու մէջ, ճամբան, քարափներու վրայ կ'երգէին «Ողջոյն Մեծ Հմմանուէլին»: Միլիոններ այժմ երկինքի մէջ գոհութիւն կը մատուցանեն 1857ին համար, որ թէպէտ ամենապէշ տագնապի և կրօնական անկումի տարին

էր, սակայն, Ամերիկայի փրկութեան տեսակէտէն փառաւոր տարի մը ետեւէն:

Վերեւի քանի մը օրինակները բերինք պատասխանելու համար անոնց՝ որոնք կը խորհին թէ՛ իրերու այս կացութեան մէջ փոփոխութիւն մը ըլլալու է դէպի բարի, որպէսզի Տէրը զրկէ այդօրինակ արթնութիւն մը: Ընդհակառակը, այսպիսի օրերն են որ վերէն Տէրով միջամտութեան առիթ կուտան, քանի որ այդ փոփոխութիւնը մենք կարող չենք կազմարել իրերու կացութեան մէջ: Պէնսիլվանիայի այցելութիւն մը կրնայ իրապէս փոխել կացութիւնը:

Յիշուած օրինակները պատասխան մըն է նաեւ անոնց որոնք կ'ըսեն թէ՛ «վերջին անգամ մը կայ, անոր պէտք է սպասել»: Առաջին և վերջին անգամները միջեւ միշտ կան ուրիշ անգամներ: Պէնսիլվանիայէն ետքը, առանց վերջին անգամի սպասելու, Հոգին այցելած է Իրլանտան, Անգլիոյ մէջ Կալլէսը, Սկովսթան, Լոնտոն և շրջակայքը, Եւրոպայի ցամաքամասին

մէջ բազմաթիւ տեղեր և այլուր:

Թիւր գողտփոր մըն է խորհիլ թէ Տէրը առաջին անգամը զրկեց Պէնսիլվանիան, մէյ մըն ալ պիտի զրկէ վերջին անգամը Իր Գալստեան նախօրեակին: Պաղեստինի մէջ կարեւոր են առաջին և վերջին անգամները: Վերջինը տեղի կ'ունենայ գարնան և կ'օգնէ հունձքի հատունալու: Սակայն այդ երկու անգամներէն զատ մէջ ընդ մէջ միշտ անգամ կուգայ ձմեռուան եղանակին ալ: Արդարեւ վերջին անգամ պիտի ըլլայ, եթէ այդ օրուան մէջ կ'ապրինք ակնկալենք զայն, եթէ ոչ Տէրը պիտի զրկէ մէջ ընդ մէջ օրհնութիւններ ալ: Պետրոս ներշնչմամբ ըսու, «կոսմոնոմիք անգամի եւ անոր որդիներուն եւ ամեն ճշտութեամբ կը կանչէ»: Յամենայն դէպս անգամ կարելի է, և մենք կը հաւատանք անոր կարելիութեան եւ անհրաժեշտութեան որ անոպատ տեղեր ծաղկին ու ովասիս դառնան: Յաջորդով պիտի ըսենք թէ ինչպէս կարելի է արթնութիւն մը:

Խ. Թ. Ս.

ՍԲ. ԳԻՐՔ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն Գ. քիւն)

Բժշկական դպրոցն էի երբ փրկութիւնս գտայ, և անուի սրտի անպատմելի խողաղութիւն: Ուրախութիւնս այնքան մեծ էր՝ որ կ'ուզէի զայն ամենուրեք պատմել և ամենը մասնակից ընել անոր: Երբ ես Աւետարանի պաշտօնեայ մը ըլլալ ուզեցի, պատճառը այն էր որ ես տարակոյս չունէի անոր ստուգութեան և վաւերականութեան մասին և մինչեւ այժմ հաստատ եմ իմ այդ համոզմանս մէջ, այլուպէս լաւագոյն էր որ ուրիշ ասպարէզ մը ընտրէի ինծի համար:

Դժուարութիւնը յաճախ շատերուն համար, Սբ. Գիրքը գիտութեան հետ համահայեցանելուն մէջ, կա՛մ անկէ է որ տգէտ են Սբ. Գրոց մասին, կա՛մ տգէտ են գիտութեան մասին, և կամ երկուքին վրայ ալ միանգամայն: Երբ բժշկական դպրոցն էի, ստէպ վէճ ունէի ընկերներու հետ, զասարմանին մէջ: Անոնցմէ մէկը մանաւանդ շատ անգամ կը հարցնէր ինծի, «Ինչպէ՞ս կ'ըլլայ որ իբր գիտական մարդ հաւատաք կ'ընծայիս Սբ. Գրոց որուն մէջ գիտական սխալներ կան»: Իսկ երբ

կը հարցնէի թէ ու՛ր են այդ գիտական սխալները: Ինծի չէր կրնար ցոյց տալ:

Օր մը սոյն ընկերս երբ դասարան եկաւ, դէմքը ուրախութենէն կը ճառագայթէր: Ինծի հարցուց թէ տակուն կը շարունակե՞մ հաւատալ Սբ. Գրքին: «Անշուշտ, պատասխանեցի իրեն, քանի որ հոն սխալ չկայ, և դուն ալ չկրցար ցոյց տալ հաս մ'իսկ: «Այո՛, կ'այ սխալ ըսաւ, Պօղոս գիտութեան հակառակ կը խօսի երբ կ'ըսէ թէ տարբեր մարմիններ կան մարդու, անասունի, ձուկի և թռչունի: Արդ, այդ իր հաւատաւովը սխալ է, որովհետեւ բոլոր մարմիններն ալ միեւնոյնն են»:

Եւ Սբ. Գրքի ուսումնասիրութեան մէջ տակաւին Պօղոսին թուղթերուն հասած չէի այն տառն: Խնդիրը ձեռք առի և սկսայ խնդրոյն վրայ նայիլ գիտական անկիւնէն: Քննեցի զայն, կենսաբանական, կենդանաբանական, մարդակազմական և հոգեբանական տեսակէտներէ: Գոյտ որ մինչեւ իսկ սաղմաբանութեան (embryology) տեսակէտէն նախա-կենսահիւթը (protoplast) ուսկից արարածք մարմին կ'առնեն, տարբեր գոյացութիւններու մէջ, իրարմէ տարբեր են: Այսօր եթէ մէկը ինծի բերէ ձուկի, հաւի, կովի, մողեսի և մարդու մարմիններէն կտորներ, խառնուած իրարու, քառորդ ժամուան մէջ տարրալուծօրէն քննելով կրնամ ըսել թէ որունն է ներկայացուած մարմնոյն կտորը: Իսկ եթէ մէկը բերէ զանազան ցեղերու և գոյներու պատկանող մարդոց մարմինէն կտորներ, ինծի համար անկուն չի պիտի ըլլայ զանոնք զանազանել իրարմէ: Որովհետեւ գրուած է՝ որ Աստուած բոլոր մարդոց ազգերը մէկ արիւնէ ըրաւ» (Գործք. 17, 24):

Սբ. Գրքը գիտութեան դասա-

գիրք մը չէ, և ուրախ եմ որ այդպէս է, եթէ ոչ անիկա 25 տարուան մէջ մէկ կողմ պիտի նետուէր, որովհետեւ դասագիրք մը անկէ աւելի չտպրիր: Ո՛չ, անիկա գիտութիւն սորվեցնելու համար չէ, այլ աւելի գերիվեր բանի մը համար, անիկայ Բանն Աստուծոյ է: Անիկա ու՛ր որ գիտութեան հանդիպի, միշտ անոր ըսածն է ճշմարիտը: Պօղոս տակէ 2000 տարիներ առաջ ուսկից գիտէր տարբեր մարմիններուն գոյութիւնը, զոր գիտութիւնը ամենատարգիւկան մանրացոյցներով և զանազան նուրբ գործիքներու միջոցով տակաւին նոր ի յայտ կը բերէ: Ան չէր գիտեր, սակայն Սբ. Հոգին գիտէր և իրեն այդպէս գրել տուաւ: Մարգիկ ո՛չ մէկ տեղ ո՛չ մէկ ատեն կարող չէն եղած և պիտի չըլլան գիտական սխալ մը գտնել Սբ. Գրոց մէջ: Յիսուս տոլար պարգեւ խոստացուած է այդ սխալը գտնողին Գիթական Հեթագոսիչ Ընկերութեան (*) կողմէ և այդ յիսուն տոլարը ետքը իմ կողմէ քարձրացաւ հարիւրի, և մենք ստացանք նամակներու ահագին դէզ մը: Պատասխանեցինք մատնանիչ ընելով իրենց սխալը և անոնք ընդունեցին իրենց սխալը և Աստուծոյ խօսքին ճշմարտութիւնը:

Իր ժամանակը բանակատեղիներու մէջ անցուցած զինուորականին մէկը ուզեց այդ հարիւր տոլարը ստանալ, և ըրեր է հաշիւ մը որ առաջին աստիճանի իր տխմարութիւնը երեւան կը հանէ:

Հաշիւ ըրեր է որ իւրաքանչիւր Իսրայելացիի միլիոնաւոր լորամարգի ինկած է ըստ Սբ. Գրոց արձանագրութեան, և գտեր է զայն անընդունելի: Հաշիւը ըրած է սապէս. — Իսրայելա-

(*) Մ. Խ. Ինքը՝ Տօք. Քիմմըր Գալազանն է սոյն ընկերութեան:

ցիք օրական 27 մղոն ճամբայ կը կտրէին: Ուրեմն մէկ կողմէ մէկ օրուան և միւս կողմէ մէկ օրուան ճամբու տարածութիւնը կ'ընէ 709 քառ. մղոն: Այսչափ տարածութեան վրայ եկեր են երկու կանգուն լորտմարդիներ որ հարիւրաւոր միլիոն լորտմարդի կ'ընէ և իւրաքանչիւր Խարայեւացիի գլուխ կ'իյնայ միլիոնաւոր լորտմարդիներ: Եւ ասիկա սխալ և անընդունելի գտնելով պահանջեր է հարիւր տուարը:

Աստուծոյ խօսքը երեւակայական հաշիւներու տեղի չէ տուած: Հոն գրուած է՝ թէ Խարայեւացիք ո՛ր տեղեր իջեւանեցան: Քառասուն տարուան այդ ճամբորդութեան այսօր իւրաքանչիւր կէտը ճանչուած և չափուած է, հետեւաբար հաշիւ եղած է՝ զոր միջին հաշուով անոնք օրական միայն հինգ մղոն ճամբայ կը կտրէին: Իսկ լորտմարդիներ ծովու կողմէն եկան բանակին վրայ մէկ օրուան ճամբայ միւս կողմէն և մէկ օրուան ճամբայ մէկ կողմէն՝ բանակին բոլորտիքը տարածուեցան որ կ'ընէ 10 մղոն ճամբու երկայնութիւն: Ասիկա շատ տարբեր է 709 քառ. մղոն հաշիւէն: Սակայն զինուորականը չգոհանալով այս պատասխանէն, դատարան դիմեց ստանուլու համար 100 տուարը: Դատաւարութիւնը տեղի ունեցաւ Նիւ Եօրք: Դատաւորը հարցուց «Հաշիւդ չիտակ ըլլալը ո՛ւսկից գիտես, դուն տեսնո՞ր այդքան տարածութեան վրայ լորտմարդիներուն եկած ըլլալը»: Ո՛չ, պատասխանեց զինուորականը: «Սակայն Մովսէս հոն էր ասիկա գրած ատենը, յարեց դատաւորը, և Մովսէս անանկ բան մը չէ ըսած»: Եւ զինուորականը չկրցաւ ստանալ հարիւր տուարը:

Ուրիշ մէկը տիրանալ ուզեց հարիւր տուարին և պահանջեց զայն ըսելով թէ Ես. 11:12 գիտականօրէն

ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱՆՈՒՍԸ ԵՒ ՍՐԲՈՒԹԻՒՆ

Գրեց՝ W Luff

Քրիստոսի մօտալուտ գալուստը կը պարունակէ գործնական գասեր: «Պետրոս տանիքը ելաւ աղօթք ընելու... տեսաւ երկինքը բացուած... ու Պետրոս երբ իր մաքին մէջ կը զարմանար թէ ինչ պիտի ըլլայ այն իր տեսած տեսիլքը Հոգին Սուրբը ըսաւ անոր, Ահա՛ երեք մարդիկ քեզ կը փնտռեն ուստի ելիր և անոնց հետ գնա, վասնզի ես զրկեցի զանոնք: Պետրոս ալ այն մարդոց քով իջաւ» (Գործք. 10:9-21): Այո, ունեցիր տեսիլք բայց անմիջապէս իջիր և ընդունը զանոնք որ դուռդ կը զարնեն:

Կարգ մը մարդիկ ուսումնասիրութեան և մարդարէութեան հոգիով

սխալ է, որովհետեւ հոն «երկրի չորս անկիւնները» ըսուած է, խորհելով որ երկիրը տափակ և քառակուսի է, մինչդեռ գիտութիւնը մեղի կը սորվեցընէ թէ անիկա կլոր է:

Այսօր իսկ որպէս խօսեցիկերպ կը գործածուի այդ ձեւը: Օրինակ ոչ մէկ արդի նաւապետ կը հաւատայ թէ աշխարհը տափակ է, այսուամենայնիւ անգամ մը անոնցմէ մէկուն բերնէն ճիշդ այդ բանաձեւը լսեցի երբ կ'ատենախօսէր ըսելով, «Այսօր մեր դրօշակը կը ծածանի աշխարհի չորս անկիւնը»: Իսկ յիշեալ համարին մէջ մարգարէն այդ բառը կը գործածէ ո՛չ թէ «անկիւն» իմաստով, այլ ինչպէս Եբրայեցիներէն բնագրին մէջ, «կողմ» կամ «մաս» իմաստովը:

Շարունակելի

Տօքթ. Րիմմեր

յափշտակուած յաճախ կը մոռնան իջնալէ կեանքի գործնական ասպարէզին: Ուստի Քրիստոսի երկրորդ գոյատեան կարեւոր նիւթէն ջանանք մեր ամէնօրեայ կեանքին համար գործնական դասեր գտնելու:

Փրկութիւն. «Տէրը չուշացներ իր խոստամունքը ինչպէս ոմանք ուշացողցած կը սեպեն, հապա մեզի երկայնամիտ կ'ըլլայ, վասնզի չուզեր որ մէկը կորսուի հապա որ ամէնը ապաշխարանքի գտն... սակայն Տէրոջը օրը գողի պէս պիտի գայ» (Բ. Պետ. 3:9-10): Արդարեւ Ան իր գալուստը կուշացնէ որպէսզի տակաւին ուրիշ հոգիներ աւելնան զԱյն օգին մէջ դիմաւորելու պատրաստ եղողներու թիւին վրայ: Ուրեմն որչափ մեծ եռանդով կը պարտինք աշխատիլ, ազօթել և զիրար յորդորել քանի կը մօտենայ այն հանդիսաւոր ժամը: Ո՛հ, ինչ թանկագին դաս մը կուտայ մեզի Առաքեալը յայտնելով, թէ երկարաձգուած է փրկութեան պատեհութիւնը, ջանանք լիովին օգտուիլ այս յորդորականէն: Ո՛հ, որչափ տհաճ է մեր առջեւը դրուած պատեհութիւնները անհոգութեամբ կորսնցնելու խորհուրդը և տեսարանը երբոր ա՛յն անօգուտ է և անդարմանելի: Ուրեմն աշխատինք քանի տակաւին ցորեկ է:

Պատրաստութիւն. «Ու պատրաստ եղողները Անոր հետ հարսնիքը մտան» (Մատթ. 25:10): «Ուրեմն դուք ալ պատրաստ կեցէք, քանզի Որդին մօր դոյ կուգայ այնպիսի ժամու մը մէջ որ դուք չէք կարծեր» (Ղուկ. 12:40):

Ամէն առաւօտ երբ կ'արթնանք պէտք է որ պատրաստութեան ազօթքը մատուցանենք, խորշիւով որ այսօր իսկ Տէրը կրնայ գալ, և նոյնպէս ամէն իրիկուն անկողին չգացած Անոր առջեւ պէտք է սա հարցումը ընել

մենք մեզի. Արդեօք պատրաստ եմ եթէ Տէրը գալու ըլլայ արթննալէս առաջ:

Հսկում. «Երանի այն ծառաներուն որ երբ գայ, զանոնք արթուն պիտի գտնէ» (Ղուկ. 12:37): Ոչ թէ մրափի մէջ հապա կատարելապէս արթուն, քանզի Առաքեալը կ'ըսէ, «Հիմա ժամանակ է մեզի քունէ արթննալու վասնզի հիմա մօտ է մեզի փրկութիւնը քան թէ այն տան որ հաւատացինք» (Հռովմ. 3:11): Ով ընթերցող եթէ այսօր Տէրը գայ արդեօք Ան քեզ պիտի գտնէ՞ արթուն և գործի վրայ:

Համբերութիւն. «Եւ Տէրը ձեր սիրտերը Աստուծոյ սիրոյն ու Քրիստոսի համբերութեանը ուղղէ» (Բ. Թես. 3:5): «Որպէսզի ձեր հաւատքին փորձառութիւնը (որ կորստական ոսկիէն աւելի պատուական է, թէեւ անիկա կրակով կը փորձուի) գտնուի գովութիւնով ու պատուով և փառքով Յիսուս Քրիստոսի յայտնուելու տանը» (Ս. Պետ. 1:7):

Ընազանգութիւն. «Ահա ես չուտով կուգամ երանի անոր որ կը պահէ այս գիրքին մարգարէութեան խօսքերը» (Յայտ. 22:7): «Քանզի Աստուծոյ փրկարար շնորհքը բոլոր մարդոց երեւցաւ որ մեզ կը խրատէ որ ամբարշտութիւնը ու աշխարհային ցանկութիւնները ուրանանք և զգաստութիւնով ու արդարութիւնով և բարեպաշտութիւնով ապրինք այս աշխարհիս մէջ ու սպասենք այն երջանիկ յոյսին և մեծ Աստուծոյ ու մեր Փրկիչ Յիսուս Քրիստոսի փառքին յայտնուելուն» (Տիմ. 2:11-13):

Մաքրութիւն. «Բայց զիտենք որ երբ անիկա յայտնուի Անոր պէս պիտի ըլլանք վասնզի զԱնիկա պիտի տեսնենք ինչպէս է» և Առաքեալը կուսել-

ցընէ. «Եւ ամէն ով որ այս յոյսը տնոր վրայ ունի, ինքզինքը կը մաքրէ, ինչպէս Ատիկա մաքուր է», (Ա. Յովհ. 3:2-3): Եւ այն օրը մեր Տէրով փառաւոր ներկայութիւնը մեզ պիտի նմանցընէ Իրեն, որ մեր միտքը գրաւած է: Այսօր, ներկայիս իսկ Տէրով ներկայութեանը մէջ ապրելով է որ մենք կը փոխուինք Անոր կերպարանքին փառացի փառս: Ուրեմն ամէն անգամ որ կը տեսնենք զԱյն ինչպէս որ է Ինք, Ան մեզի կը փոխանցէ բան մը աւելի իր փառքէն, բայց հիմա մենք զինք կը տեսնենք անյայտ կերպով, որպէս թէ հայելիի մէջ, հետեւաբար թերի է մեր մէջ արտացոլացումը Անոր փառքին, բայց երբ զինք տեսնենք զէմ առ զէմ, իր կատարեալ փառքին մէջ, յայնժամ զինք պիտի արտացոլացնենք անթերի կերպով:

Յոյս. «Ու երբ այս բաները սկսին ըլլալ ելէք ու գլուխնիդ քարձրացուցէք վասնզի ձեր փրկութիւնը մօտ է» (Ղուկ. 21:28): Ներկայ դարուս մեղքի, տառապանքի և տաքնապի թոհուբոհին մէջէն հաւատքի մարդը կը լսէ երկնային մեղմ ձայն մը՝ որ զինք կը վստահեցնէ թէ Աստուծոյ փառքը տեսնելու իրական յոյսովը կրնանք միշտ ուրախ ըլլալ:

Այս օրուան համար կանոն մը. Մեր տուներուն պատերուն վրայ շատ անգամ կը տեսնուին կախուած սա խօսքերը. — «Մի ընել որչա՛ն բանը որ չպիտի ուզէիր գտնուիլ երբ Յիսուս գար. և Մի ըսել որչա՛ն խօսք մը որ չպիտի ուզէիր խօսիլ երբ Յիսուս գար»:

Սիրելի ընթերցող շատ զգոյշ և պատրաստ ըլլանք քանզի Տէրը գրանքով է:

Ս. ԳԻՐԲԸ, ՃԱՄԲՈՐԴԻՆ ՄԻԱԿ ՌԻՂԵՑՈՅՑԸ

Հաւատացեալին մէկը, որ ճամբորդութեան պատրաստութիւններ կը տեսնէր, իր պայուսակը գրեթէ լեցուած էր. մէկէն իր շուրջը գտնուող բարեկամներէն մէկուն ըսաւ. «Պայուսակիս մէջ, սա անկիւնը, պզտիկ տեղ մը կայ ուր կը փափաքեմ տեղաւորել ժամացոյց մը, ճրագ մը, հայելի մը, հեռագիտակ մը, բանաստեղծական հատոր մը, մի քանի կենսագրութիւններ երգարան մը, լաւ սրուած սուր մը, պզտիկ գրադարան մը, բոլոր այս առարկաները պէտք է տեղաւորել 20×12 սնթմի չափ անկիւն մը: Շատ աղէկ, պատասխանեց բարեկամը, սակայն ինչպէ՞ս կրնաս տա բոլոր բաները հոս զետեղել: Շատ դիւրիւն է պատասխանեց ուրախութեամբ ճամբորդ քրիստոնեան, իմ Սբ. Գիրք» այս բոլորը իր մէջ կը պարունակէ:

Տիեզերքի բոլոր գրականութեանց ամենա հրաշալի գիրքը Սբ. Գիրքն է քանզի ան յաւիտեանական Աստուծոյ խօսքն է: Մենք Աստուծոյ արարածներն ենք և կ'անցնինք մեղաւոր աշխարհի մէջէն դէպի յաւիտեանականութիւն: Ուստի պէտք է մեզի գիտնալ թէ ո՛րն է այն նշանակութիւնը որ կ'սկսի և կը հասնի երկնային քաղաքը: Փառք ըլլայ, որ Աստուած ինքը, յաւիտեանական կեանքը ժառանգելու և երկնային հանգիստը մտնելու համար իր խօսքին մէջ մեզի լոյս տուած է: Ուրեմն Սբ. Գիրքը բացարձակապէս անհրաժեշտ է մեզ ճամբորդներուս, ան է միակ ապահով առաջնորդը որուն մէջէն կը դիտենք այն երջանիկ և փայլուն յաւիտեանականութիւնը ուր պիտի փայլին արդարները իրենց Հօրը Թափաւորութեանը մէջ:

Ֆրանս. Թարգմ.

ԱՐԹՆՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ

ԱՍՏՈՒԾՈՅ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ

(Նար. Ճախուրդ քիւեց)

Պիլլի Պրէյ մանկական պարզամտութեամբ կ'ուրախանար Աստուծոյ գործին մէջ, երբ ինքզինքը նուիրեց հոգիներ շահելու գործին: Իր թափանցիկ անկեղծութիւնը և հաճելի սրախօսութիւնը ամէն տեղ զինքը փնտռեալ քորոզիչ և այցելու մը դարձուցին: Իր սրամիտ և ուամիկ բանաստեղծութիւնները լեցուն էին հաւատքով և յոյսով առ Աստուած: Կեանքի անուշութիւններուն ու դառնութիւններուն մասին խօսած տառերն իր սրախօսութեան մէջ հոգեյոյզ չեղտ մը կար երբ կ'ըսէր. «Ես կը ճաշակեմ թէ մեղր թէ քոցախ, սակայն փառք Տիրոջ, քոցախը կ'առնեմ դժուրով իսկ մեղրը շեշտով (քէփէ):»

Երբ կ'արտասանէր մեր Տիրոջ «ես եմ կենաց հացը» հրաշալի խօսքը սապէս կը յառաջանար սոյն խօսքին վրայ, «թանկագին հաց է սա՛. նահապետներ, մարգարէներ այս հացէն կերան և երբեք կարծր չգտան զայն: Առաքելներն ու մարգարէներն ալ կերան և գտան զայն կակուղ և համեղ: Եւ օրհնեալ ըլլայ Տէրը, խեղճ Պիլլի Պրէյ ալ կրնալ ուտել զայն առանց ակռաներու և կրնայ գիրնալ անով»:

Կ'ակնկալուէր որ այս արտաբերութեան շնորհիւ յարուցանեն լուրջ և ձեւապաշտ մարդոց կողմէ, որոնց կը պատասխանէր իր անխուսափելի սրախօսութիւնով (հիւմըր) մը և կ'ըսէր. «Եթէ անոնք զիս տակառի մը մէջ ալ դնեն, խցածակէն «Հոլիւուս» պիտի աղաղակեմ, և մէջ բերելով Զարլզ Ուէսլէյի,

«Ո՛հ երանի թէ ունենայի հազար լեզու

Իմ մեծ Փրկչիս փառքն երգելու» խօսքերը, կը յարէր, «Ուէսլէյ իր ունեցածէն 999 հոտ աւելի լեզուներ կ'ուզէր, շատ դժուար է Պիլլի Պրէյին իր մէկ հատիկ լեզուն չգործածելը»:

Պիլլի երբեք նշանաւոր երգող մը չէր, սակայն սապէս կը տրամաբանէր, «Թէպէտ ոմանց պէս գեղեցիկ չեմ կրնար երգել, իմ Հայրս կը փափաքի մտիկ ընել նաեւ զիս ինչպէս լաւ երգողները: Իմ Հայրս կ'ուզէ մտիկ ընել ազաւաւ ինչպէս կ'ընէ սոխակը, որովհետեւ երկուքն ալ ինքը ստեղծեց», և այսպէս ան կը ցատքէր ու կը խաղար և կ'աղաղակէր, «Երբ երթանք մեր տունը՝ երկինք, պիտի թնդացնենք երկնային կամարները»:

Իր բոցավառ և վառվռուն բնաւորութեանը շատ կը յարմարէր Նոր Կտակարանի շատ մը պատմութիւնները: Օրինակ՝ Գեղեցիկ կոչուած դրան առջեւ բռնկուած կաղին պատմութիւնը, իր խառնուածքին հետ կը համաձայնէր հիանալիօրէն, և պատմած տառերը կը ցատքէր «Եթէ կաղ մարդը իր ուրախութենէն կրնար ցատքաւել և գովել Տէրը, ինչո՞ւ Պիլլի Պրէյ չկարենայ ընել զայն» կ'ըսէր Յետոյ կ'ուշաւցնէր Մենք պէտք է Տէրոջը համար ցատքենք և խաղանք: Սատանան ունի իր զուարթ մարդիկը, և իմ Տիրոջն Յիսուս Քրիստոսի զուարթ մարդն եմ: Նա լաւ տէր մըն է, և լաւագոյնս կը վարձատրէ իսկ Սատանան ուրախութեան տեղ՝ վիշտ կուտայ, սակայն Տէրը վշտին փոխարէն ուրախութիւն

ժը պարգեւէ, մոխիրի տեղ՝ գեղեցկութիւն, սուգի տեղ՝ ուրախութեան իւղ և թախիծի տեղ՝ փառաբանութիւն:

Երբ բարեկամի մը հանդիպէր ճամբան, աչքը քթթելով և իր մէկ անբացատրելի ուստումը ընելով կ'ըսէր. «Դուն երէց եղիր և ևս քու քարտուղարդ, դուն ըսէ փառք Տիրոջ, և աս ըսեմ՝ Ամէն»:

Պիլլի անոնցմէ չէր, որոնք կ'ուսնան քրիստոնէական ուրախութիւնը միայն կիրակի օրերը: Հանքերու մէջ ամենօրեայ իր աշխատանքներու մէջ իսկ միշտ ուրախ էր: Կ'ըսէր. «Որքան երկրի երեսի վրայ, նոյնքան ընդեր-Վրեայ տեղեր ուրախութենէս կրնամ ցատքել»: Իմ ընկերներս կ'ըսէին թէ, «ասիկա քրիստոնէութիւն չէ», սակայն աս կրակի մէջ ծնած եմ, ծուխի մէջ չեմ կրնար ապրիլ: Կ'ըսէին որ «այսքան ցատքելու, խաղալու և աղաղակելու պէտք չկայ, որովհետեւ Տէրը խուլ չէ»: Պատասխանելով կ'ըսէի. «Սակայն դուք պէտք է գիտնաք որ Սատանան ալ խուլ չէ, բայց իր ծառաները մեծ աղմուկ կը հանեն: Սատանան կը նախնորէ մեզ տեսնել տարակուսի մէջ քան ուրախութենէ աղաղակելու մէջ»: Այսուամենայնիւ, հոնքի մէջ իր ընկերները իրեն հանդէպ խորին յարգանք մը կը տածէին: Ոմանք կ'ըսէին իրեն, «Դուն ազօթ է և մենք ալ մտիկ ընենք», և Պիլլի կ'աղթէր պարզունակ լեզուով մը և կ'ըսէր. «Տէր, եթէ մեզմէ մէկը այսօր պիտի մեռնի փոսին տակ մնալով, առիկա ես ըլլամ, ասոնցմէ ոչ մէկը չմեռնի, որովհետեւ անոնք ուրախ չեն սակայն աս ուրախ եմ, եթէ այսօր մեռնիմ երկինք պիտի երթամ»:

Երբ ոտքի կ'ելլէի կը տեսնէի որ շատերուն աչքերէն արցունք կը հոսէր, և շատ չանցած անոնցմէ ոմանք ազօթող մարդիկ կ'ըլլային: (Շար.)


ՑԱԽԱԳՆԻԼ ԿՐԱԿՈՎ



Պատերազմի ժամանակ փառաւոր կապոյտ երկինքի մը տակ խոպան դաշտի մը մէջ կը կենայի: Թեթեւօրէն ինկած ձիւնը կարծես ճերմակ սաւանով մը պատեր էր դաշտը: Օդանաւ մը գլխուս վերեւ՝ գեղեցկութիւն մը ինքնին, կը փալփէր: Սլաժայր և ճաղարածեւ մարմինը ծածկուած էր դողդողացող դեղինով մը: Յանկարծ սարսափահար նշմարեցի՝ որ այդ դեղինը կրակ է և ես տկոնատես կ'ըլլայի կեանքի համար վաղքի մը: Նաուդիդը իր բոլոր արագութեամբ կը դիմէր դէպի նաւակայան, մինչ իր ետեւը և ներքեւը այդ սարսափելի — աւաղ սիրուն երեւոյթով — կրծող դեղինը՝ մեքենային խուժումին պատճառաւ աւաղ կրակէն կատաղի հնոցի մը կը փոխուէր: Վայրկեան մը յետոյ ան արագօրէն վար կ'իջնէր և քիչ յետոյ մօտակայ բլուրի մը ետեւ աչքէ անյայտացաւ. սեւ մուխի պզտիկ ամպ մը բարձրացաւ երկինքը: Ան մոխիրի վերածուած էր:

Ինչ ահաւոր պատկերն է սասիկա աշխարհի, իր ներքին ցաւազնող կրակովը: Մէկը կ'ըսէ, «Դարուս ընկերային կեանքը կը նմանի մեր երկրագունդին, վրան բարակ կեղեւով իսկ ներքինը եռեփող հրաբուխով և յաղաչող հեղուկային կրակով»: Ասիկա կեանքի վաղք մըն է իրեն հետ ունենալով ահուկի կրակը, և յաւիտենական բլուրներուն ետին, «անոնց տանջանքի ծուխը կ'ելլէ յաւիտենա յաւիտենից» (Գայտ. 14:11):

Մեղքով ապրող մէկուն ցաւալի վախճանը:



ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿԱՆԵՐ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ

ՕԴԱԶՈՒԻ ՄԸ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Ցուրտ գիշեր մըն էր երբ ես և կրնո Մէյրի նստած էինք ձախտափիւռին առջեւ, Պիլ Տանքոն հեռաձայնեց ինծի խնդրելով՝ որ օգնային վտանգաւոր թռիչք մը կատարեմ։ Այդ օրը օդը շատ գէշ էր և մի քանի օդանաւեր ստիպուած վար իջեր էին։ Պիլ կ'ըսէր, մէկը կար որ անպայման կ'ուզէր Նիւ Կորք երթալ ուր կը գտնուէր իր օթոյէ արկածեալ մահամեծ աղջիկը հիւանդանոցի մը մէջ։

Դառնալով կնոջս հարցուցի, «Մէյրի ի՞նչ կ'ըսես, երթա՞մ, թէ պէտ օդը գէշ է, սակայն, ասկէ աւելի գէշ օդերու մէջ ալ գտնուած եմ։

Ո՛չ, պատասխանեց Մէյրի։ Մէյրի թէպէտ պզտիկ, իր «ոչ»երը խոշոր էին։ Հետեւաբար Պիլին դառնալով խնդրեցի որ ներողամիտ ըլլայ ինծի որ ստիպուած էի զինքը մերժել։

Ի՞նչ յետոյ դուռը զարնուեցաւ, ու Պիլ երեւցաւ, ընկերացած պարոնի մը հետ որ յորդանօք բարեւելով ներս մտաւ և խօսքի սկսելով ըսաւ, «Իմ անունն Սթանլօ է և ես ստիպուած եմ Նիւ Կորք երթալ ո՛ւր հոգեվարքի մէջ կը պառկի աղջիկս։ Պիլ կ'ըսէ որ՝ այժմ միակ անձը որ զիս կրնայ տանիլ դուք էք, և թէ դուք ալ կը մերձէք տանիլ, եկայ գիտնալու թէ պիտի չուզէ՞իք փոխել ձեր միտքը։»

«Պր. Սթանլօ, ըսաւ Մէյրի, քեզմէ ներողութիւն կը խնդրեմ այդ մերժումին համար։ Անուսինս իրմէ զատ

ետեւը կրկու հոգի ունի, որոնց համար պէտք է խորհի, ես և 7 տարեկան մեր զաւակը, Աստուած մի՛ տրտացէ, եթէ իրեն բան մը պատահի, և չկարենայ վերադառնալ...»

— Ատիկա գիտեմ տիկին, ըսաւ Սթանլօ, իմ աղջիկս ալ ձեր աղջկան տարիքի ունի և ես այնքան կը սիրեմ զինքը որքան դուք ձերը, սակայն Նէ մահամեծ կը պառկի, թերեւս թուերը բացած զիս կը կոնչէ։ Խնդրեմ խորհեցէք պահ մը, եթէ ձեր աղջիկը անոր տեղը ըլլար և իր հայրը ուզէր, ի՞նչ պիտի ընէիք։ Պահ մը սոսկալի լռութիւն մը տիրեց, Մէյրի խըռովեալ ձայնով մը ըսաւ. «Կարծեմ՝ դուք յաղթեցիք Պր. Սթանլօ, այո... եթէ... իմ աղջիկս ըլլար անոր... տեղը...»

Առանց ժամանակ կորսնցնելու հասանք օդակայանը, օդաչուի հագուստըս վրաս քաշեցի ու մտայ օդանաւը, ետեւի նստարանն ալ տեղաւորուեցաւ Սթանլօ մէջքին կապելով անկարգելը։ Մեքենան աշխատեցողի, մինչ Պիլ ազանջիս կը փափսար. «Բարի ճանապարհ սիրելիս, Աստուած քեզի օգնական ըլլայ, որպէսզի թերի կերպով նորոգուած մեքենան քեզի տպանով տեղդ հասցնէ, երթաք բարով։»

Բանի մը վայրկեանէն արդէն օդը բարձրացեր էինք և կը սուրայինք հակառակ հովի մը մէջէն։ Երբ Նիւ Կորք մօտեցած էինք մեքենան սկսաւ անկանոն աշխատիլ, մէյ մըն ալ պէնզինի խողովակին կողմէն կրակ տաւ։ Ան-

միջապէս պէնզինին աղբերակը գոցեցի, ելեքտրական հոսանքն ալ կտրեցով սկսայ առանց մեքենայի դէպի վար քշել: Սակայն գէշը հոն էր որ մութ ըլլալուն չէի գիտեր թէ ինչ տեսակ վայր մը կը գտնուիմ: Այդ պահուն Սթանլօին դառնալով ըսի պատրաստուէ որ վար ցատքես, իսկ ես անկարգել չունենալուս՝ պէտք է ցվերջ դիմադրեմ: Նախ մերժեց եւ ըսաւ որ չի պնդեմ անոր վրայ: Կրակը երթալով կը սաստկանար, ես յաճախ նաւուն ուղղութիւնը կը փոխէի որպէսզի հավը բոցերը դէպի մեզ չբերէ: Օ ն պատրաստուէ ըսի, խենդ մի՛ ըլլար ինքզինքդ ազատելու նայէ, խորհէ աղջըկանդ վրայ: Մէկ, երկու, համբերուս չմնաց որդէն ան մութին մէջ աներեւոյթ կ'ըլլար: Այն ատեն միշտակ մնալովս սկսայ բռնուն պայքարի մը: Սակայն կամաց կամաց յուսահատութիւնը սկսաւ արտիս մէջ տեղ գրաւել, կը վախնայի որ ողջ ցամաք պիտի չկարենայի իջնել: Կը զարմանամ թէ ինչպէս այդ ատեն միտքս ինկաւ Պիլիին ողջերթի խօսքերը, «ԱՍՏՈՒԱՄ քեզի օգնական»:

Կեսնքիս մէջ աղօթող մը եղած չէի: Կինս կ'աղօթէր, դեռ այս առտու տեսայ որ կ'աղօթէր, եւ միշտ կ'աղօթէինք ինքի համար ալ: Լաւ, ես ինչո՞ւ չաղօթեմ ինքի համար, խորհեցայ: Անմիջապէս որոշեցի աղօթել: Յաւիտեանակութեան քայլ մը մնացած անյայտ մարդու մը բոլոր կարողութեամբս աղօթեցի, սրտիս խորքէն բարձրադուակ, ճշմարտամային օգնութեան ճիշտ մը արձակեցի «ՈՎ ԱՍՏՈՒԱՄ ՕՂՆԷ ԻՆՄԻ»:

Եւ Տէրը լսեց. անմիջապէս զգացի ասիկա: Մէջս զարմանալի վստահութիւն մը գոյացաւ, թէ պիտի ազատիմ: Աստուած էր որ այդ գիշեր հրկիզուած օգնական ուղղութիւն տրուաւ: Վերջապէս սաւելի ճիշդ կ'ըլլայ

ըսել օգնական ինկաւ գետին քան թէ իջաւ: Մնացած ուժերս հաւաքելով ինքզինքս խցիկէս դուրս քաշեցի թողելով որ այրի տնիկա:

Կը յիշեմ թէ կամուրջի մը վրայ յէն օթո մը անցնելով դէպի ինձ եկաւ եւ քանի մը հոգիներ օգնութեանս փութացին: Անոնք տեսած էին այրող օդանաւին ինչալը: Իրենց հետ գացի մօտակայ քաղաք մը ուր իմացայ Սթանլօի սպանով նիւեօրք հասնիլը:

Յաջորդ առաւօտ կանուխ վերադարձայ տուն կինս զիս տեսնելով ուրախութենէն փղձկեցաւ, խեղճը չէր գիտեր դեռ մանրամասնութիւնը, որուն տեղեկացաւ չուտով: Միշտ կը պնդէի թէ Աստուած ինքը յայտնապէս իր ձեռքով զիս ազատած էր ստոյգ մահէ մը՝ պատասխանելով իմ աղօթքիս:

«Գիտե՞ս Տիգ ըսաւ Մէյրի, ես ալ մինչեւ վերջը ամէն վայրկեան քեզի համար կ'աղօթէի, եւ փառք կուտամ Իրեն որ մեր աղօթքներուն պատասխանեց»:

Այն օրէն ասդին Տէրը ինձ սորվեցուց աղօթել եւ իրեն համար ապրիլ դր կ'ընեմ իր շնորհքովը:

Անգլ. Թարգ. Վ.ԷԶԱՋՈՒՆ

ԳԵՂԵՅԻՆ ԽՕՍՔԵՐ

Տիկինի մը հարցուցին թէ սինէման յաճախելու նկատմամբ ինչ կը խորհի: Ըսաւ այս հանճարեղ կինը. Սինէման միայն մէկ ժամ ուսուցիչ կ'ըլլայ, իսկ շատ տարիներ կործանիչ դեր կը կատարէ:

Մի խորհիւր բան մը, որ պիտի վախնայիր երբ ուրիշները գիտնային: Մի խօսիւր բան մը, որ պիտի վախնայիր, երբ ուրիշները լսէին: Մի ընեւ բան մը, որ պիտի վախնայիր, ուրիշները տեսնէին:

ՀԱՐՑՈՒՄ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Հարց.— Վարդապետական ո՞ր կէտերու մէջ Շաբաթապահները միւս աւետարանական քրիստոնեաներէն կը տարբերին:

Պատ.— Երբ «Շաբաթապահներ» կ'ըսէք, ըսել կ'ուզէք «Գալստական Շաբաթապահներ», որովհետեւ պէտք է զանազանել զանոնք կարգ մը ուրիշ շաբաթապահներէն որոնք Մկրտչական են և վարդապետութեամբ կալվիրական, յետոյ կայ «Տիւնկարդ» կոչուած շաբաթապահներ որոնք, ուղղափառ են վարդապետութեամբ:

Ա՛րդ, առանց չեղելու մեր յայտարարութեան մէջ յիշուած ուղիքիծէն, լուսաբանելու համար ոմանք, պատասխանենք սոյն հարցումին:

1. Գալստական Շաբաթապահներուն և այս աղանդին պատկանող ուրիշ հատուածներուն մեծագոյն մոլորութիւնը քառութեան հարցին մէջն է: Կը հաւատան թէ Քրիստոս խաչին վրայ քառութիւն մը կատարած է, սակայն անիկա կիրարկութեան չէ դրուած: Թէպէտ Յիսուս համբառնալէն ետքը սկսած է բարեխօսել այդ ուղղութեամբ Հօրը քով, սակայն, հաւատացեալներուն մեղքերը կը մնան դեռ արձանագործուած մինչեւ որ Յիսուս մտաւ 1844 թուականին երկնային սրբարան (Դան. 8:13,14) դատաստանական քննութիւն կատարելու (այսինքն հաւատացեալներու մեղքերու քննութիւն): Յետ ա-

ւարտման սոյն քննութեան Յիսուս հաւատացեալներուն մեղքերը պիտի առնէ և բեռցնէ Սատանային վրայ իբր քառութեան նոխազ: Սատանան պիտի տանի այս մեղքերը անապատ, որ պիտի ըլլայ մեր երկիրը հազար տարի:

2. Փրկութեան համար, կ'ըսեն անոնք, պէտք է նաեւ պահել Մովսիսական օրէնքը: Ան որ Շաբաթը չի պահեր՝ կորսուած է: Քրիստոս այդպիսիներուն անունները Կենաց Դիրքէն պիտի ջնջէ: Կ'երեւի այս ալ նկատի պիտի առնուի դատաստանական քննութեան ատենը...

3. Ան որ Մէկշաբթին այսինքն կիրակին պահէ, զազանին կնիքը ունի իր ճակտին վրայ և յաւիտեանս պիտի դատապարտուի:

4. Գալստական Շաբաթապահներէն դուրս միւս բոլոր եկեղեցիներ «Բաբելոն» են:

5. Մահէն ետքը հոգին մարմնոյն հետ անգիտակից վիճակի մէջ կ'ըլլայ երկուքը մէկէն յարութիւն կ'առնեն յարութեան օրը:

6. Սատանան, չար հրեշտակներ և բոլոր մեղաւորներ 1000 տարի ամայացած այս երկրին վրայ պատժուելն ետքը բնաջինջ պիտի ըլլան, որով զժողովի ալ չեն հաւատարմութեան տարբեր է Յիսուսի ուսուցումները, և որքան պարզ:

Ս.

Խօսելով Աստուծոյ հետ՝ չկորսուիր շունչ, խօսէ՛:

Քալելով Աստուծոյ հետ՝ չկորսուիր ուժ, քալէ՛:

Սպասելով Աստուծոյ՝ չկորսուիր ատեն, սպասէ՛:

Բիչը շատ է եթէ Տէրը մէջն է,

Մարդուն ամենէն զրադ օրը յարգ շունչի Աստուծոյ վայրկեանին հետ:

Շատը քիչ է ամէն տեղ՝ եթէ Տէրը չգործեր միատեղ:

Այսպէս գործէ Աստուծոյ հետ բան չկորսուիր,

Ան որ կը գործէ Անոր հետ ամենէն լուր և ամենէն շատը կ'ընէ:

ԼՅՆԿՖԷԼԻՍ

ՀԱԳԻԳԻ ՏՕՍԹ

Տիւնեատու էն պէօյիւք պախթի-
յարլըգ հագիգի պիր տօսթա մալիք
օլմագլըգ տըր: Պա թէճրիւպէ պիլի-
յօրուգ քի, էն պէօյիւք սէրվէթ, էն
ազիմ իգպալ վէ այնի վագթաա էն
հաաիր շէյ, վէ էն պէօյիւք նիմէթ
հագիգի տօսթ տըր: Պուռուռն սախթէսի
գատար թէհլիքէլի, վէ պէլալը շէյ
պուլունմատըղը կիպի, պուռուռն խա-
լիսի գատար տա խայրլը վէ արզղը
օլունմագ պիր պէրէքէթ եօգ տըր:

Պու խուռուստա կիկերոն շէօյլէ
տէյօր, «Իլահլարըն ինսանա վէրտիք-
լէրի էն եիւքսէք պէրէքէթ հագիգի
տօսթլուգ տըր, անըն նօգսանը նուր-
առըգ պիր ուզուն կէճէ տիր»

Սոկրատ տախի պուռնը թասարգ
էտիյօր, «Հէր տտէմին պիր հասրէթի
վար. քիմիսի մալա, քիմիսի շան ու
շէօհրէթէ, քիմիսի հիքմէթէ թալիպ,
պէն իսէ սահին պիր տօսթա աշըգ իմ.
պէն տօսթլարըմը տիւնեալարա տէյիշ-
մէմ»

Էմըրսըն տէմիշ տիր քի, «Պէնիմ
տօսթլարըմ արայարագ պուլունուր
շէյլէր տէյիլ իտիլէր, անլէրի պոնու
Ալլահ վէրտի»

Սոլոմոն, «Պիրտէրտէն գիյատէ
գաովի տօսթ վար. վէ տօսթ տաիմա
սէվէր», տէյօր:

Պէյքըն շէօյլէ սէօյլէյօր, «Տօսթ
տտէմին այնէսի, էօմրիւնիւն տիւմէնի,
տէրտինին վէ սաատէթինին շէրիքի
տիր»

Տօսթու օլմայան պիր շախս իչիւն
տիւնեատա հիչ պիր սաատէթ վէ սէ-
լամէթ եօգ տըր, օ պիր էօքսիւզէ
պէնզէր, տիւնեա անըն իչիւն պիր
չէօլ տիր: Տէրտինէ վէ մէսէրրէթինէ
շէրիք օլան եօգ տըր: Հագիգաթէն
հէր շախս արզղը էտէր քի պիր տօս-

թա մալիք օլսուն, քի հայաթընըն հէր
հալ ու քէյֆիյէթլէրինտէ անըն իլէ շէ-
րիք օլսուն: Պիր ֆէյլէսօֆ տէմիշ տիր
քի, «Էյէր պիր քիմսէնին տօսթու եօգ
իսէ գալպինին սըրրլարընը աշմագ ի-
չիւն, պէյապան պիր հէրէ կիտիպ օ-
րոտա պուլունան թաշլար վէ թօի-
րաղա սէօյլէսին ճիւմլէ կիզլի սըրր-
լարընը»

Հագիգի պիր տօսթ պուլ-
մագ նէ գատար միւշքիւլ վէ անսըգ
հայաթ սայքի ղայրի միւմքիւն տիր,
վէ անըն իչիւն տիր քի հէր շախսըն
մոթլուգ պիր տօսթու վար տըր:

Ատէմլէրին ետիմը օլտուգլարը
էն պէօյիւք ետիւլըլարտան պիրի
տօսթ ինթիխապընտա տըր: Տօսթլա-
րըն եիւզտէ տօգսանը սախթէ տիրլէր:
Չօգլար տօսթ օլուրլար շախսի մէն-
ֆատթլարը վէ մագսէտլէրի իչիւն:
Ինսան էն պէօյիւք տարպէյի քէնտի
սըգը օլան տօսթունտան եշմիշ տիր:
Յուլիոս Կեսար, քէնտինէ էն եագըն
վէ սըրտաշ տօսթու օլան Պրոթոստան
խանչէրի եէր իքէն տէյօր, «Սէն տէ
մի Պրոթոս»

Հագիգի տօսթ պուլ-
մագլըգ ղայլէթ զօր տըր, լաքին պիր
տօսթ պուլմագ իչիւն անըն իլէ ուզուն
միւտտէթ ետշամալըսըն:

Պա թէճրիւպէ կէօրիւյօրուգ քի
հագիգի տօսթ պուլմագլըգ միւշքիւլ
տիր: Սանա սատըգ վէ էմիյէթլի տէ-
յու պիտիյին տօսթ, սէնին տիւշիւ-
շիւնէ վաաթա օլապիլիր: Սէնին
սըրրլարընը վէրտիյին քիմսէ սանա էն
պէօյիւք ճինայէթի ետիոն պիրի օլա-
պիլիր: Պատըլար հէտիյէլէր իլէ տօսթ
տօսթուն ալմաղա չալըլըյօրլար, պաա-
ղըլար հէր քէսի քէնտինէ միւշթոմ է-
տէրէք: Պատըլար քէնտի թապիթ-
լարընա, մէսլէքլէրինէ, ետշայըլ ու-
սուլլարընա կէօրէ տօսթլար փէյտա

էթմէյէ չալըչըյօրլար, լաքին պու չալըչմալարըն ճիւմլէսի տախի պաթըլ տըր:

Հագիգի օլան սալթ պիր շախս պիգէ տօսթ օլտալիլի օ տախի Խէլասքեարըմըզ Յիսուս Քրիստոս տըր: Օ պիգիմ իլէ օլտն շախսի ալագասընը պէյան էթմէք իչիւն, քէնտինի պիգիմ իչիւն պիրատէր, զէվճ վէ զայրի թէսմիյէ էթմիշ տիր, լաքին հագիգի տօսթլուգ պուշլարտուն տահա ալի, տահա ճէլիլ վէ տահա ագիմ պիր տալագա պէյան էյլէր: Խէլասքեարըմըզ պու տիւնեատա քէնտի շախրալէրինտէն ալըլմագ իւզրէ իքէն, անլէրէ սօն հատիկեար օլմագ իւզրէ տօսթլուգընու հիպա էտիյօր, «Պէն սիգէ տօսթ թէսմիյէ էտէրիմ»: Պու հագիգաթա ինսանլար տէյիլ, մէլէքլէր տախի հայրան գալըրլար:

Յիսուս Քրիստոս միւմիւն իչիւն պիրիճիք հագիգի տօսթ տըր, վէ պուշնու իսպաթ իչիւն իգհար էյլէտի քէնտի պիէմալ, թարիֆ վէ խայալ օլուշումայան մուհապպէթինի: Օ պիգի սօշունա գատար սէվտի, էպէտի մուհապպէթ իլէ սէվտի, պիգի Փէտէրին քէնտինի սէվտիյի կիպի սէվտի: Սուլար օ մուհապպէթի սէյիւնտիւրէմէզ: Պու մուհապպէթ ֆէթհ օլուշմագ, սէյիւնմէզ վէ միւշքիլաթ տինլէմէզ: Քեաշքի պիգէ Խէլասքեար օլան Յիսուսըն պիգիմ տօսթլուգ օլտուգընու տախի հայաթըմըզա տմէլէն պիլէիտիք օ զէման հագիգաթէն թէրէնիւմ էտէպիլէճէյիզ:

«Եւ՝ Յիսուս, աչգըմ սանա. Սէն սին հէր տօսթտան ալա: Իւմիւտիւմ պիւթիւն սէնտէ. Եօգ մէլճամ ախէր եէրտէ. Սէն ֆախրըմ սըն էպէտէն, Եւ՝ Յիսուս, Սէն, անճագ Սէն»:

Քրիստոս պիգէ հագիգի տօսթ վէ


սըրտաշ օլտուգընու խապէր վէրիյօր. «Սիգի տօսթ թէսմիյէ էթիմ, զիրա՝ Փէտէրիմտէն իչիթտիյիմ շէյլէրին ճիւմլէսինի սիգէ պիլտիրտիմ»: Էկէր պիր քիմսէ գալպինի տօսթուշա աշաւայօր իսէ, տօսթլուգըն ոգսան տըր: Խնսան գաթէն պուշնու իչիւն տօսթարար: Յիսուս պիգէ սէմալի սըրրլարընը ինսնըյօր վէ էֆիյէթ էտիյօր: Աճէպա ճիւմլէ սըրրլարըմըզ վէ կիւճիւքլէրիմիգի Անա կէօթիւրիւյօրմուշուզ: Չօգ տէֆալար Անը տօսթ հալընտա պիլմէտիյիմիգ իչիւն չօգ պէրէքէթլէրտէն մահրում օլուպ չօգ ֆէլաքէթլէրէ տախի կիրիֆթար օլույօրուզ:

Հագիգի օլան տօսթ սալթ վէ անճագ Քրիստոս տըր, աշ գալպինի անապ սէյլէ ճիւմլէ սըրրլարընը վէ կիւճիւքլէրինի վէ անճագ օ սանա հարտըմ էտէպիլիւր:

«Սէյլէմէլի իմ սըգլէթիմ Բապա, Չիւն շէֆիք պիր տօսթ տըր Օ պանա. Պէս իչիտիրսէ նիյազըմ, բէճամ, Սըգլէթլէրիմ հէփ պուլուր խիթամ»:

«Պէն սիգէ տօսթ թէսմիյէ էտէրիմ»:

Վեր. ԹԵՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ



Սըր ձէյմըս Սիմբըն քրորոֆորմը քէշֆ էտէն ալիմ տօգթօր էօլիւմ եաթաղընտա եաթար իքէն պիրի հագլաչըպ սօրար քի էթտիյի քէշֆլէր իչիւնտէ էն պէյիւյիւ հանկըսը տըր: ձէլապէն տէր, «1861 թարիխիտէ, պիր Մնուշ սապահը պուլարմ քի պէն պիր կիւնաքեարըմ, վէ Յիսուս Քրիստոս պէնիմ Խէլասքեարըմ տըր: Էն պէյիւք քէշֆիմ պու տըր»: Էյ օգույան սէն պու քէշֆի էթմիւշ միսին»:

ԱԼԹՈՒՆ ՈՒՓԱՂԸ

ՏՕՍԹՈՒ ԹԱՃԻՉ ԷԹՄԷՄԷՔ ԻԶԻՒՆ
ԹԱՎՍԻՑԷԼԷՐ

Պու թավսիյէլէրին միւսէլիֆի, պիր ագրուպուսը թարաֆընտան պու մատտէտէ չօգ զահմէթ չէքմիշ պիրիսի տիր: Պիր ագրուպա քի մուհապպէթինին ճիտտիյէթինէ, վէ վուգֆիյէթինէ հիշ շիւպհէ հօգ, ֆուգաթ աշըրը տէրէճէտէ կէրմի վէ ֆիրուսէթտէ նօգսան իտի:

Հէր շէյտէ իթիտուլ լուզըմ տըր, հաթթու իպրագ էթտիյիմիզ մուհապպէթտէ, վէ սէվտիյիմիզ պիր քիմսէյի մուհաֆազա էթմէք տօլաշընյէ գուհատ կէրտիյիմիզ զէմանտա պիլէ: Աթիտէքի թավսիյէլէր տէօրթ սատէ գանուշլարտան իպարէթ տիր, անլէր սատէ լուքին պէրրագ վէ թամմ գանուշլար տըր:

1. Souprուն իլէ օլան ալագանսա սեհի զիյասէ աղուլամասընա Ֆուրսաք պրագ եախօս մահալ վէր: Էյէր օ սէնի իւշ տէֆա եանընա կիթմէսի իշիւն չաղըըյօր իսէ, իքի տէֆա կիթ, օ իւշիւնհիւ տէֆատա սէնին եօլունու հասրէթլէ կէօզէտէճէք, վէ կիթտիյինտէ սէնի ճան ու կէօնիւլտէն գապուլ էտէճէք:

Պիրինին պանա միւսթամ օլտուղընը հիսս էթմէք նէ՝ գասար խօշ տըր, պիլաքս օսանճ սէպէպի օլմագ հիսսի նէ գասար ֆէնա տըր:

2. Souprուլուն սանա միւսասանէ էքսիյի սեռէնէսէ անա Ֆաիսէլի օլմաղա չալը, օնսան էօքէյէ աւլա կէչմէ: Տօսթունա տօղրու կէօսթէրտիյին աշըրը տէրէճէ մուհապպէթ՝ օնու բուհաթսըզ էտէր: Վէ օնա տօղրու էյի հիսսիյաթլարըն թէքէրրիւր էտիլմէսի, տայանըլմագ շէյլէր օլուրլար: Պիր առէմին տօսթունա օլան վուգֆիյէթի՝ օնուն իշիւն հէր շէյի եափմագ-

տան իլէրի կէլմէզ, իլլա օ շէյլէր քի քէնտինէ խօշ տըրլար վէ եափըլտըզլարընա քէնտիսի իշիւն պէօյիւք խըզմէթ եէրինէ կէչէրլէր: Տիգգաթ էթ քի անլէրին սէնին թարաֆընտան իճրա էտիլմիշ օլտուգլարընը թէստտիւֆի օլարագ անլասըն:

Ճիւմէլմիզ ագաւտըլը սէվէրիզ վէ քէյֆիմիզին իսթէտիյի շէյլէր սըզընա սարըլըրըզ, իսթէմէյիզ քի պիլիմ գաստէն եիւզիւ իւսթիւ պրագաղըմըզ շէյլէրի տիկէրի կէլիպ թէրթիպէ գօյսուն: Պու եօլ իլէ կէօսթէրիլէն աշըրը մուհապպէթ վէ մահրէմանէ տլագա պիլի մէյուս էտէր:

3. Սեհի ֆեհի իեիլիկ չօգ, souprուն իեիլիկ ազ, չօգ ազ մեղուլ օլ: Պու շէյէ տիգգաթ էտիլիր իսէ, եանըլմագ սուրէթտէ խօշ պիր նէթիճէ հասըլ էտէր: Սէպէպի պու տըր քի, պէն քէնտի իշիմի, տօսթունըն եափաղընտան տունա չափուգ սուրէթտէ եափարըմ:

Էյէր տօսթուն պէնիմ եարտըմըմա միւրէճաւթ էտէր իսէ, աթէշտէն վէ սուտան կէչէրէք անըն եարտըմընա կիթմէլիյիմ, էյէր տէյիլ իսէ, ուզագ տուրարագ հէմ քէնտինէ, վէ հէմ տէ պանա պէօյիւք պիր խըզմէթ էթմիշ օլուրում: Էյէր խապէրի օլմայարագ պիր խըզմէթ էտէպիլիր իսէմ, վէ օ շէյէ տէ ինթիյամ վար իտիյինի կէօրիւր իսէմ, օ թագտիրտէ հէր զէման օնուն իշիւն հաղըր օլմալըլմ:

4. Ղէյրի մուհիմ մասսէլէրսէ ֆեհիսի իշիւն չալըմասը իշիւն souprունու ազաս պրագ: Նիշնէն տօսթունու պէնիմ իլէ պիրլիքտէ տիւշիւնմէյէ, իշլէմէյէ մէճպուր էտէյիմ: Հէր էյի վէ տօղրու շէյին նիւմունէսի պէն միյիմ: Պաշգալարըն պէնտին ֆարզլը տիւշիւնիւպ իշլէտիյի իշիւն եանըլ էտիյօր տիւշիւնմէք նէ՝ գասար պօշ պիր շէյտիր: Պիլա շիւպհէ տօսթունա հէր զէ-

ԻՍԿԷՆՏԵՐ Ի ԱԶԻՄԻՆ ԻԻԶ ՊԱՅՐԱՂԸ

Քրիստոստան 301 սենե գատար էվ-վել Իսկէնտէր Ի Ազիմ Իսմինտէ մէջ-հուր ֆաթիհ հաշամագտու Իսի: Պու-զաթ չօգ ազըլը պիր ճէնէրալ օլուպ զայէթ սիւրաթ իլէ իլէրի կիտէր վէ պէօյիւք ֆիւթ իւհաթլուր գազտնըր Ի-տի Տէնիլիւր քի նէ զէման պիր տիյար Ես շէհր իւզէրինէ հիւճմ էտէր վէ օլ շէհր քէնտինէ աւը օլուպ թապի օլմադ իսէ, առէթի իւզրէ տէր հալ շէհրտէն տըշարը Եիւքսէք պիր Եէրտէն պէյազ պիր պայրազ շէքէր Իսի Պուհուհէն տէմէք իսթէր Իսիքի էկէր շէհր քէն-տինէ թէսլիմ օլուր իսէ էհալի իլէ չօգ լութֆ վէ շէֆգաթ իլէ մուամէլէ էտէճէք տիր Պիր ազ սօնրա, թէսլիմ օլմատըզլարընը կէօրտիւլիւնտէ, պէ-յազ պայրազ գալտըրըլը պէրինէ գըր-մըզը պիր պայրազ աւըլըր Իսի Պու-հուհէն տալի տէմէք իսթէր Իսիքի շէհր իսարապ էտէճէք լաքին սէքէ-նէսինի էսիւկէյէճէք տիր: Թէքրար թէսլիմ օլմատըզլարընը կէօրտիւլիւն-տէ, զազապը ալէվլէնիպ գըրմըզը պայրազը գալտըրըր Եէրինէ սօն օլու-րազ սիյահ պիր պայրազ շէքէր Իսի, օ ալէմէթ Իսի քի շէհր վէ սէքէնէսի էօլիւմէ մահքիւմ տիր Պու իւշ պայ-րազլար պիրզէ մուհիմ հազիգաթլար պէյան էտէրլէր:

Պէյազ պայրազ. ինայէթի կէօս-տէրիւր քի իսլաւ կիւնիւ շիմտի տիր. պու Ալլահն սանա պիր ինայէթ փէյ-զամը վէ միւթտէսի տիր Յիսուս Քրիս-տոս իսա իւզէրինտէ պիզիմ իչիւն էօլ-

ման «Ահն օղլու սըն» տէյէմէմ, ֆու-գաթ հէր նէ տէ օլա օ խուսուստա քէնտինի տիւշիւնմէյէ սէվզ էտէպիլի-րիմ:

Պէնիմ պու տէօրթ թալսիյէլէ-րիմի սընա, վէ տօսթըլըն տաիմի գալաճագ տըր:

ԵՐԷՑ

տիւ, Անըն գանը պիզի ճիւմլէ կիւ-նահարըմըզտան փաքլէր, վէ պիզի Ալլահա էվլաւ վէ էպէտի հայաթ վա-րիսլէրի է տէր: Իմտի պու պայրազ ճիւմլէ կիւնահարըլարը թէվպէյէ վէ Ալլահ իլէ սուլի օլմաղա տալէթ էյլէր:

Գըրմըզը պայրազ. Ք. Մուգաւ-տէս պիզէ նասըլ իսէլաս պուլապիլիւր Իսիլիմիզի խապէր վէրիւր իքէն. քէ-գա պէյան էտէր քի, (գըրմըզը պայրազ իլէ) պէօյլէ ազիմ իսէլասը վէ Ալլահն աթիյէսի օլան էպէտի հայաթը իմալ էթմէք գօրգուլը պիր շէյ տիր: (Յուլհ-Տ:24) տէ զայէթ գուզվէթլի պիր իւ-թար վար տըլ: Օ պէյան էտէր քի, է-կէր Բապա Յիսուս Քրիստոս իման էթ-մէք իսէք կիւնահարըմըզա էօլէրէք Ալլահն մուգաւտէս հուզուրընտան է-պէտէն այրըլաճաղըզ: Իմտի հալա գէ-մինտէ Եաշար իքէն ճանըլըն իսէլասը-նը վէ էպէտիյէթլինի թէէմին էյլէ Հա-յաթ Բէիսինտէն:

Սիյահ պայրազ. Պու սօն վէ սի-յահ պայրազըն փէյզամը պու տըր.— «Փէէ կէն. գափու գափանցը.» Փուր-տաթ էլտէն գաշտը. քէգա այրըլը, էպէտի այրըլը Ալլահն վէ Քրիստո-սըն, մէլէքլէրին վէ մուգաւտէսլէրին հուզուրընտան. սէմալաթըն նաղմէլէ-րինտէն, ճէլալընտան վէ մութլուլու-ղընտան էպէտէն մահրում գալմագտըր «Ատէմլէրէ պիր քէրրէ էօլմէք, վէ անտէն սօնրա հիւքմ թազտիր օլուհ-մուշ տըր» (Իպր. 9. 27): Ոէլասընը վէ էպէտիյէթլինի պու հայաթաւ իքէն, պու կիւն վէ շիմտի թէէմին էյլէ. պէյազ պայրազ հալա տալմագ-տա վէ գըրմըզը պայրազ պիր թէհիւ-քէյի խապէր վէրմէքտէ, վէ սիյահ պայրազ տահա տալմագտան էվլէլ խիլաւհարըն գուհաղընա աթըլ վէ էմ-նիյէթտէ հաշա: Պիր ազ սօնրա պօրու-շալընտըզա գէմինտէ գալմայրապ Եօգար, Եօգար ալընահագարը: Ամէն»

ԻՆԿ ԹԷՐԵ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱԾԽԱՐՅԷ

Հին Պաղեստինի Բիղսարէմ քաղաքին մէջ պեղումներ կը կատարուէին, ուր գտնուած են հետաքրքրական մնացորդներ։ Անոնցմէ մէկը շատ հին հրէական Սինակոկ մըն է՝ որ Գ. դարու թուականը կը կրէ։ Անկից զատ աւելի հնամենի ժամանակներու պատկանող ընդերկրեայ դամբոնների ալ գտնուած են, կ'ըսէ անգլիական թերթ մը։

*. Ըստ Ամերիկեան թերթի մը, Նիւ Յորքի մէջ, կաթողիկէ (մայր եկեղեցի) մը կը չինուէ որ լրանալու վրայ է։ Կ'ըսուի թէ եկեղեցին այնքան մեծ է որ, եկեղեցիին յետսամասին մէջ կեցողը, խորանին առջեւ կեցող մարդը չի կրնար ճանչնալ Անիկա աշխարհի մեծագոյն եկեղեցին պիտի ըլլայ, որուն երկայնութիւնը մղոնի մը մէկ տասներորդն է, և եպիսկոպոսական Յարանուանութեան կը պատկանի։

*. Հովիւ Նիոմիլլըր՝ որ տակուսին կեդրոնացման կայանին մէջն է իբր բանտարկեալ, կը յուսար ազատ արձակուիլ Հիթլէրի յիսնամեակի տարեգարձի տօնին առթիւ — որովհետեւ ամէն տարի այդ առթիւ բազմաթիւ քաղաքական բանտարկեալներու ատուածիւն կը տրուէր։ Այժմ որ չիրականացու այդ յոյսը, կը խորհի թէ յետ այսու իրեն համար երբեք ազատութիւն չկայ։ Սենեակի մը մէջ ազատանձին՝ սպրեւիտ դատապարտուած է որ խանգարած է իր տաղանթիւնը, այնպէս որ գործ մը ընելու ի վիճակի չէ։ Հիմա թուղթ և գրիչ կրնայ գործածել իր խցիկին մէջ։

*. Կ'ըսուի թէ աշխարհի վրայ 706 հրեայի մէկ Սինակոկ կայ, մէկ հռոմէական կաթողիկ եկեղեցի՝ իւրաքանչիւր 840 անդամներուն համար, իսկ մէկ ժողովարան՝ իւրաքանչիւր 157 բողոքականի համար։

*. Ժամանակ մը կար որ Չինացի համայնավարներ քրիստոնեաներու դէմ դառն հոգի մը կը տածէին։ Այս օրերս, կը թուի թէ այդ հոգին փոփոխութեան ենթարկուած է։ Հետեւեալ խօսակցութիւնը տեղի ունեցած է միսիոնարի մը և բարձրաստիճան համայնավարի մը միջեւ։ Միսիոնարը կ'ըսէ, «Մօտերս ճաշի հրաւիրեցի համայնավար զօրավարներէն մէկը զոր կը ճանչնամ 1930էն ի վեր, որպէս կատաղի թշնամի մը քրիստոնէութեան։ Նախնական քաղաքավար խօսքերէն ետքը ճաշէն անմիջապէս առաջ ըսաւ ինձի։

— Կը յիշէ՞ք անցեալը։

— Կը յիշեմ պատասխանեցի, որ դուք քանի մը տարի առաջ բարեկամներէս ոմանք տարիք և պահեցիք իբր բանտարկեալ։

— Այն ատեն շատ թիւրիմացութիւններ կային։ Միսիոնարներ մեզի շատ օգնեցին Շինգէյի և Շանգէյի մէջ։ Կը ցուինք անցեալի թիւրիմացութիւններուն համար, ասկէց ետքը կ'ուզենք միասին աշխատիլ Չինաստանի բարօրութեան համար։

*. Մօտերս Ֆրանսայի չորս բողոքական յորանուանութիւններ միաւորով կացմեր են միակ կազմակերպութիւն մը, «Ֆրանսական Բարեկարգեալ Եկեղեցի» անուանով։



ԿԱՐԵՒՈՐ Է

Անոնք որոնք «Աւետ. Ձայն» թերթը կ'առնեն առանց որ իրենք ուզեն, կը նշանակէ թէ մեր կողմէ զրկուած է: Դիմած ենք իրենց բարեացակամութեան որպէսզի քաջալերեն զայն: Մէկուն կողմէ նը-
ւէր ըլլալու պարագային՝ մենք կը յիշենք զայն թերթիս մէջ:

ՍՏԱՅՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Բանբեր» Հոգեւոր Ամսաթերթ

Հասցէ՝ Rev. H. N. Ghazarossian

7, Rue Papère

Marseille (France)

ԹԵՐԹԻՍ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Նգիպոս՝

25 Է. դ.

Ամերիկա՝

1½ տոլար

Ֆրանսա եւ Սիւրիա՝

30 Ֆրանկ

Նկատի ունենալով մեր հայրենակիցներէն ոմանց նիւթական ան-
ձուկ վիճակը, յօժար ենք այդպիսիներուն գեղչեալ գնով մը ղրկել
թերթը, եթէ առ այդ մեզի իմացնեն անձամբ կամ մեր գործակալի
միջոցաւ:

ՄԵՐ ԲՈՎԸ ԿԸ ԳՏՆՈՒՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐԲՈՅԿՆԵՐԸ

1. Չարլի Գըլզըն	24 Էջ	Գին՝	1 Է. դ.
2. Սամուէլ Մօրիս	32 ”	”	1 Է. դ.
3. Գործի Պիղասոսի	24 ”	”	1 Է. դ.
4. Իգնասիոս	20 ”	”	կես Է. դ.

Վերոյիշեալ գրքիկները հանելի, խիստ հետաքրքրաւոր եւ հոգե-
շունչ պատմութիւններ են: Դիմել խմբագրութեան հասցէին:

Ուշադրութիւն.— Բոլոր դրամական առաւումներ, յօդուածներ եւ քրթակցու-
թիւնք պէ՛տք է հասցեագրուին հետեւեալ կերպով.—

K. T. SARIAN

2, Rue Ahmed Pacha Hasanen,

Shoubra, Cairo (Egypt).

PRINTED IN EGYPT BY

SAHAG MESROB PRESS,

25, SHARIA JEWFIK CAIRO.